

**ԵՐՈՒՍԱԴԵՄԻ ՆՈՐԱԳՅՈՒՏ ՀԱՅԵՐԵՆ
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

Պրոֆ. ՄԱՅԲԼ ՍԹՈՈՒՆ (Երուսաղեմի Եբրայական համալսարան)

1991 թ. վերջին, Երուսաղեմի Դամասկոսյան դարպասից հյուսիս գտնվող Մուսրարայի թաղամասում պեղումների ժամանակ գտնվել է շորս հայերեն արձանագրություն, մեկը՝ խճաղարդ հատակին, երկուսը՝ շիրմաքարերի վրա և մեկ գրաֆիտո՝ մեծ կավե գավաթի վրա: Պեղումների ղեկավարը պ. Դավիդ Ամիթն էր՝ Իսրայելի հնությունների վարչությունից (Israel Antiquities Authority): Այս պեղումների լիակատար հաշվետվությունը՝ հայերեն արձանագրությունների արտաքին վերարտադրությամբ հանդերձ, հրապարակվելու է հիշյալ վարչության կողմից:

ԽՃԱՆԿԱՐ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Այս արձանագրությունը գտնվում է պեղված վանական համալիրի բնակելի մասի ընդունարանի խճաղարդ հատակի մեջտեղում: Այն տեղադրված է 1,19 մ տրամագիծ ունեցող ձվաձիր շրջանակի (մեդալիոնի) մեջ, որը սենյակի հատակի անբաժանելի մասն է կազմում: Նրա խճաքարերի շարքի փաստորեն նույնն է, ինչ և հատակի մնացած մակերեսը կազմողներին: Մեդալիոնի շրջանակը՝ դրսից դեպի ներս, կազմված է մեկ խճաքարի (tessera) լայնություն ունեցող սպիտակ գծից, նույն լայնության սև գծից, երկու քարի լայնություն ունեցող սպիտակ գծից, և վերջինը՝ մեկ քարի լայնություն ունեցող սև գծից: Այս շրջանակը իրեն շրջապատող հատակից և իր մեջ պարունակող արձանագրությունից տարբերվում է միայն քարերի դասավորությամբ:

Հայերեն արձանագրությունը բաղկացած է յոթ տողից: Առաջին և վերջին տողերն ունեն մեկական բառ, մնացած տողերը տարբեր երկարության են, ինչը պայմանավորված է տեղի առկայությամբ: Տողերի միջև նշմարվում է երկու խճաքարի լայնություն ունեցող կարմիր գիծ:

Տողերի չափերը հետևյալն են. տող 1. երկարությունը՝ 16 սմ, բարձրությունը՝ 10,5 սմ, գրված մասի երկարությունը՝ 10,5 սմ, բարձրությունը՝ 10 սմ: Տող 2. երկարությունը՝ 89 սմ, բարձրությունը՝ 10 սմ, գրված մասի երկարությունը՝ 77 սմ, բարձրությունը՝ 11,6 սմ: Տող 3. երկարությունը՝ 103 սմ, բարձրությունը՝ 17,5 սմ, գրված մասի երկարությունը՝ 92,3 սմ, բարձրությունը՝ 11,3 սմ: Տող 4. երկարությունը՝ 103,5 սմ, բարձրությունը՝ 17 սմ, գրված մասի երկարությունը՝ 102,3 սմ, բարձրությունը՝ 11 սմ: Տող 5. երկարությունը՝ 92,5 սմ, բարձրությունը՝ 17,3 սմ, գրված մասի երկարությունը՝ 97 սմ, բարձրությունը՝ 12 սմ: Տող 6. երկարությունը՝ 70 սմ, բարձրությունը՝ 17,5 սմ, գրված մասի երկարությունը՝ 61 սմ, բարձրությունը՝ 11,3 սմ: Տող 7. երկարությունը՝ 54 սմ, բարձրությունը՝ 8 սմ, գրված երկարությունը՝ 13 սմ, բարձրությունը՝ 7 սմ:

Արձանագրությունը փաստորեն ամբողջովին պահպանվել է: Վեցերորդ տողում պակասում է շորս խճաքար, սակայն նրանց բացակայությունը որևէ տարակույս չի առաջացնում ընթերցման համար: Ստորև մենք բերում ենք նախ արձանագրության ճշգրիտ վերարտադրությունը, այնուհետև՝ տառադարձությունը՝ ցույց տալով բառերի բաժանումը (նկ. 1):


1. ԵՍ
2. ԵՍՏԱԹԵՐԵՅԱ
3. ԲԿԻՋՑԱԽՃԱՊԱԿՍ
4. ՈՐՄՏԱՆԷՔԻՏՈՒՆՍՉԻՍ
5. ԵՒՋԵՂԲԱՅՐԻՄՉՂՈՒ
6. ԿԱՍՑԻՇԵՑԷ(Ք)Ի

7. ՔՍ
 1 ԵՍ 2 ԵՍՏԱԹ ԵՐԷՑ ԱՅՐԿԻ 2ՑԱԽՃԱՊԱԿՍ 4 ՈՐ ՄՏԱՆԷՔ Ի ՏՈՒՆՍ
 ՉԻՍ 5 ԵՒ 2ԵՂԲԱՅՐ ԻՄ 2ՂՈՒԿԱՍ ՑԻՇԵՑԷ[Ք] Ի 7 ՔՍ

Ե՛ ԵՍ՝ 2 ԵՎԱՄԱԹ ԵՐԵՑԱ, ԿՅԱՄՐԱՍՄԵԼ ԵՄ ԱՅՍ ԽՃԱՆԿԱՐՐԻ՝ 4 [ԳՈՒՔ],
 յՈՐ ՄՈՒՆՈՒՄ ԵՔ ԱՅՍ ՄՈՒՆԵՐ, ԻՆՃ 5 և ԻՄ ԵՂԲԱՅՐ ԴՈՒՑԿԱՍԻՆ ՀԻՂԵՑԵՔ Ի 7 ՔՐԻՍ-
 ՄՈՍԱՍ:

ՄԵԿՆԱՐԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ.

1. Արձանագրությունը գրված է մաքուր ու անաղարտ դասական գրա-
 բարով և իրենից ներկայացնում է այն շինության ընծայականը, որտեղ և
 գտնվել է, իսկ շինությանը վերաբերող տառերն ըստ պարտադիր չէ հաս-



Նկ. 1

կանալ որպես «Եկեղեցի» կամ «մատուռ», շնայած այն փաստին, որ Մաս-
 տարայի եկեղեցում (640-ական թթ.) գտնվող Թեոդորոս Գնունու արձանա-
 գրության երրորդ տողում եկեղեցին անվանված է «տուն»¹: Եվ իսկապես,
 ինչպես ցույց են տվել պեղումները, այն սենյակը, որի մեջ գտել էին ար-
 ձանագրությունը, կենտրոնական գիրք էր զբաղեցնում վանքի բնակելի մա-
 սում և ծառայում էր ընդունելությունների համար:

2. Հիշատակվող երկու անունն էլ հունական ծագում ունեն: Եւստաթ-ը
 պարզորոշ կերպով հունական Εὐστάθιος անվան հայկական ձևն է: Սա-

¹ Գ. Հովսեփյան. Գրչության արվեստը հին հայոց մեջ, մաս Գ, Քարտեզ հայ
 հնագրության. Վաղարշապատ, 1913, տախտակ 4:

կայն Հր. Աճառյանի² և Մ. Աղավնունու³ մոտ այդ անունը չի հանդիպում։ Հր. Աճառյանը հիշատակում է Ստաթէ համառոտված ձևը, այլ ոչ արձանագրության նւստաթ ձևը։ Չնայած այդ հիշատակությանը, իր անձնանունների բառարանում Հր. Աճառյանը չի մատնանշում տվյալ անունը կրող և ոչ մի անձի։ Եվ իրոք, նւստաթիս լրիվ ձևն էլ շատ հազվագեպ է կիրառվում հայերի մոտ։ Այսպես, այս անվան և ոչ մի ձև չի հանդիպում մինչև 1200 թ. գրված ձեռագրերի հիշատակարաններում⁴ և ոչ էլ հնարավոր է գտնել այն Երևանի Մաշտոցի անվան Մատենադարանի և Երուսաղեմի Պատրիարքարանի Մատենադարանի ձեռագրացուցակների անվանացանկերում։ Սբ. Եվստաթիոսին նվիրված մի եկեղեցի գոյություն է ունեցել միջնադարյան Հայաստանում՝ հանրահայտ Տաթևի վանքում, սակայն սույն փաստը ամենավին լույս չի սփռում խնդրո առարկա արձանագրության վրա։

3. Հատակի նվիրատու Եվստաթը անվանում է իրեն «Երէց», որը հունարեն *ἐπισκοπος* բառին համապատասխան նշանակում է ինչպես «ավագ», այնպես էլ «քահանա»։

4. Արձանագրության 3-ի հատակի պատրաստման գործողությունը նկարագրված է «արկանեմ» («գցում եմ, տեղադրում եմ») բայի «արկի» (անցյալ կատարյալ) ձևով։ Առաջին հայացքից «արկանեմ» բայի իմաստն այստեղ տարօրինակ է թվում, սակայն այն կարելի է համեմատել «հիմն արկանեմ» («հիմնադրում եմ») սովորական արտահայտության մեջ նրա կիրառության հետ։ Ինչ վերաբերում է այն փաստին, որ նվիրատուն այնպես է խոսում իր մասին, կարծես թե ինքն է կատարել աշխատանքը, հմտ. օրինակ, Սբ. Հովհաննիսի եկեղեցու Կոմիտասի արձանագրությունը (618 թ.), որտեղ նա խոսում է եկեղեցու տանիքը վերականգնելու մասին. «Ես, Կոմիտաս եկեղեցապան... շինեցի զտաճար սրբոց վկայիցս Քրիստոսի»⁵։ «Ես» Կոմիտաս եկեղեցապանս (խորանապետս), կառուցեցի Քրիստոսի այս սուրբ նահատակների տաճարը»։ Պարզ է, որ Կոմիտասն ինքն է պատրաստել խճանկարը։ «Խճանկարի» համար արձանագրության մեջ օգտագործված է «յախճապակ» հազվագյուտ բառը, որը չի հանդիպում Երուսաղեմի մյուս խճանկար արձանագրություններից և ոչ մեկում։

5. Նվիրատվության բանաձևին հաջորդող դիմումի ձևը սովորական է այս կարգի ընծայական արձանագրությունների համար։ Այստեղ պահպանվել է Եվստաթի եղբայր Ղուկասի անունը, որը տարածված *Λουκας* անվան ընդունված հայկական ձևն է։ Այն փաստի հիման վրա, որ երկու անուններն էլ հունական են և քրիստոնեական, կարելի է թերևս եզրակացնել, որ երկու եղբայրներն էլ կղերականներ էին, որոնց մոտ ընդունված էր աստվածաշնչական կամ եկեղեցու սրբերի անուններ վերցնելը։

6. Երուսաղեմի հայերեն արձանագրություններ պարունակող խճանկարները թվագրված չեն և կենտրոնացած են երկու վայրում, մեկը՝ Զիթենյաց լեռան վրա, իսկ մյուսը՝ Մուսրարայում, որտեղ և գտնվել է այս նոր արձանագրությունը։ Բոլոր խճանկարները (բացի այս մեկից) հայտնաբերվել են անցյալ դարում և թվագրված չեն։ Այն պեղումները, որոնց ընթացքում ներանք գտնվել են, նույնպես որևէ ստույգ թվեր չեն տվել, այնպես որ այդ հատակներին վերագրված թվագրումները ոչ մի դեպքում ճշգրիտ չեն կարող համարվել։ Իրականում առաջարկված թվագրումները հաճախ զուտ կռահումներ կամ նույնիսկ ցանկալի ենթադրությունն են։ Այն փաստը, որ խնդրո

² Հր. Աճառյան. Հայոց անձնանունների բառարան. Բեյրութ, 1972, հ. 2, էջ 151—152.

³ Մ. Աղավնունուի. Միաբանք և այցելութ հայ Երուսաղեմի. Երուսաղեմ, 1929.

⁴ Ա. Մաթեոսյան. Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, Ե—ԺԲ դդ. Երևան, 1988.

⁵ Գ. Հովսեփյան. Նշվ. աշխ., տախտակ 2.

2 «Հանդես», № 1—2

առարկա խճանկարը հայտնաբերվել է խնամքով իրականացված պեղումների ընթացքում և հնագիտական տվյալների հիման վրա կարող է թվագրվել VII դարի II կեսով, խիստ կարևոր է: Այս ժամանակը որոշվում է ըստ հատակի կրաշաղախի մեջ դրված դրամների, Արձանագրությունն պարունակող խճանկարը պահպանության համար հանելուց հետո, այդ դորը նյութը, որ պատրաստված էր փայտածուխի հետ խառնված կրից, հետագոյնում է ենթարկվել նրա մեջ գտնվել է հինգ դրամ, որոնցից ամենավաղը IV դարի է, իսկ ամենաուշը՝ VII դարի կեսերի արաբ-բյուզանդական դրամ է: Այս վերջին դրամը մեզ համար ամենից կարևորն է, քանզի այն ապահովում է terminus post quem արձանագրությունը պարունակող խճազարդ հատակի ստեղծման համար:

7. Հնագիտական տվյալներին մենք կարող ենք ավելացնել հնագրական բնույթի նկատառումներ, ընդունված կարծիքների համաձայն հայկական գրերը ստեղծվել են 391—406 թթ. միջև⁶, Այս իրադարձությունն մասին բավական տեղեկություններ են տրամադրում ժամանակակից աղբյուրները, որոնցից գլխավորն է աթուրենի հեղինակ Մաշտոցի Վարքը, գրված նրա աշակերտ Կորյունի ձեռքով, VI կամ VII դարի ձեռագրեր չեն պահպանվել, և հնագույն ստույգ թվագրում ունեցող ձեռագիրը 862 թ. Մլքեի ավետարանն է (Վենետիկի Մխիթարյանների հավաքածուի № V 1144/86): Այսպիսով, թվագրման համար անհրաժեշտ համեմատական նյութ քաղելու համար մենք ստիպված ենք դիմել վիմագրությանը:

Երուսաղեմի խճանկարները, ինչպես ընդունված է համարել, միակ հայտնի հին խճանկարներն են, որոնք կրում են հայերեն արձանագրություններ. դրանք կարելի է որոշակի զգուշավորությամբ համեմատել հնագույն շրջանի հայերեն թվագրված վիմական արձանագրությունների հետ: Իհարկե, գրչության յուրաքանչյուր ավանդություն տարբեր է. կանոնավոր վիմական արձանագրությունների գրչության ձևը զանազանվում է կանոնավորված ձև չունեցող այնպիսի աղբյուրների գրչության ձևից, ինչպիսիք են գրաֆիտոն և այլն: Այսպիսով, սկզբունքորեն ճիշտ չէր լինի համարել, թե կարելի է վիմական արձանագրությունների գրչության զարգացումը օգտագործել խճանկարները ուղղակիորեն թվագրելու համար, սակայն մենք մեծ ընտրություն չունենք, հաշվի առնելով V—VI դդ. հայկական գրի նմուշների սակավությունը: Գ. Հովսեփյանը հայկական հնագրությանը նվիրված իր աշխատության մեջ մատնանշում է V դարի վերջի միայն մեկ արձանագրություն՝ Տեկորի եկեղեցուց, որն ավերվել էր XX դարի սկզբին երկրաշարժից⁷, Հաջորդը վերը հիշատակված 618 թ. բնծայագիրն է Սբ. Հովսեփի մեծ եկեղեցուց և 622 թ. Անիի արձանագրությունը⁸:

8. Այդ արձանագրություններին այժմ կարելի է ավելացնել մի շարք գրաֆիտոններ նազարեթից ու Սինայից, որոնք թվագրվում են V դարի առաջին կեսով, այսինքն՝ աթուրենի ստեղծումից հետո մեկ-երկու տասնամյակի սահմաններում⁹: Տառերի ձևերի քննությունը ցույց է տալիս, որ VII դարը ընդունելի թվագրություն է նոր արձանագրության համար:

9. Եվստաթի արձանագրությանը մոտ պետք է համարել Երուսաղեմի հայկական խճանկարներից ամենանշանավորը, այսպես կոչված ռեզոնանսների

⁶ G. Dédéyan. Histoire des Arméniens. Toulouse, 1982, p. 156.

⁷ Գ. Հովսեփյան. նշվ. աշխ., տախտակ 2: Գոյություն ունեն ավելի լավ լուսանկարներ, հմտ. S. Der-Nersessian. Armenian Art: East and West. Paris, Arts et Métiers graphiques, plate 32

⁸ Գ. Հովսեփյան. նշվ. աշխ., տախտակ 1, 2:

⁹ Մ. Սթոուն. Հինգերորդ դարու հայերեն վիմագրություններ նազարեթեն.—«Պատմա-բանասիրական հանդես», 1991, № 3, էջ 52—62: M. E. Stone. Armenian Inscriptions of the Fifth Century from Nazareth.—REArm. t. XXI, 1991, p. 315—322.

խճանկարը, որ հայտնաբերվել է 1894 թ., Մուսրարայի շրջանում, Դամասկոսյան դարպասից հյուսիս ծավալված շինարարական աշխատանքների ժամանակ: Այդ հայտնագործությունը մանրամասն նկարագրել է անգլիացի Բլիսը¹⁰: Դժբախտաբար, այստեղ գտնված մնացած նյութերը թուրքական իշխանությունների կողմից տարվել են Կոստանդնուպոլիս և հայտնի չէ, թե այժմ որտեղ են գտնվում: Նրանց թվում կային ապակե ու կավե անոթներ և բացի այդ, առնվազն մեկ հայերեն վիմագիր արձանագրություն, որը կոտրված էր յոթ մասի: Վերջինիս մասին բազմաթիվ հիշատակություններ կարելի է գտնել գիտական գրականության մեջ, ինչը պայմանավորված էր խճանկարի գեղեցկությամբ ու հիանալի պահպանվածությամբ: Հատուկ ուշադրության են արժանի Գ. Հովսեփյանի հոդվածը և Հ. Տաշյանի հավելումը Ստրօնգոսկու հոդվածին, որը նվիրված էր Եվստաթի և «թուղունների» խճանկարի մոտակայքում հայտնաբերված Օրփեոսի խճանկարին¹¹: Դեռևս պարզված չէ, թե իրականում ինչ հարաբերություններ կային «թուղունների» խճանկարի՝ այն շրջապատող գերեզմանաքարերով հանդերձ, և Եվստաթի խճանկարի հետ առնչվող շենքերի համալիրի միջև: Այդուհանդերձ, նորագյուտ արձանագրության մասին վերջնական ենթադրություններն անելիս այս երեք խճանկարները միասին պետք է դիտել:

10. Պատմական տեսանկյունից կարևոր է նշել, որ Եվստաթի խճանկարը գտնվել է մի շինության մեջ, որը մաս է կազմում շենքերի նույն համալիրի, ինչ և այն եկեղեցին, որի խորանում գտնվել է մի հունարեն արձանագրություն: Այս հունարեն արձանագրությունը հնագրական տվյալների հիման վրա թվագրվել է VII դարի սկզբով: Ավելին, հայկական տապանաքարերից մեկը, որի մասին խոսվելու է ստորև, թվագրվում է VI դարի I կեսով: Այս փաստը նշանակալի հետաքրքրություն է ներկայացնում, քանզի հարցեր է հարուցում հայերի և հույների կողմից համատեղ վանքեր պահելու վերաբերյալ: Հայկական եկեղեցին մերժեց Քաղկեդոնի ժողովի (451 թ.) որոշումները, գրավելով մի այնպիսի դիրք, որը վերջիվերջո հանգեցրեց Հայաստանի եկեղեցու լիակատար անջատմանը բյուզանդականից¹²: Տարանջատման գործընթացը, սակայն, աստիճանական էր, և հայկական եկեղեցու վերջնական դիրքորոշումը բուն Հայաստանում չէր կազմավորվել մինչև 506 թ. Դվինի ժողովը¹³:

Ինչ վերաբերում է Պաղեստինին, ապա աղբյուրներից կարելի է ստանալ այն տպավորությունը, որ հայերի անդամակցելը ոչ հայկական վանքերին շարունակվել է շատ ավելի երկար ժամանակ: V և VI դարերի համար գլխավոր աղբյուր է հանդիսանում Կյուրեղ Սկյութապոլսեցու երկը՝ նվիրված Պաղեստինի վանականներին, որին մենք մանրամասն անդրադարձել ենք այլուր¹⁴: Հետևաբար, բավական է մեջբերել միայն մեկ հատված: Խոսելով սբ. Սաբայի մասին՝ Կյուրեղը պատմում է, որ 501 թ. «նա հայերին աղոթարանից տեղափոխեց Աստծու կողմից շինված եկեղեցին»:

¹⁰ F. J. Bliss. Excavations in Jerusalem, 1894—1897, London, Palestine Exploration Fund 1898, p. 253—54.

¹¹ G. Ovsepian. Mosaik mit armenischer Inschrift im Norden Jerusalems.—ZDPV, 18, 1895, S. 88—90; G. Dashiian. Anhang.—ZDPV 24. 1901, S. 166—171; J. Strzygowsky. Das neugefundene Orphei—Mosaic in Jerusalem.—ZDPV, 24, 1901, S. 139—165 (կացուցիչ տեղեկություններ են պարունակվում Քիֆիսում հրատարակված «Նոր դար» հանդեսի № 189-ում):

¹² K. Sarkissian. The Council of Chalcedon and the Armenian Church. New York, Armenian Church Prelacy. 1965, p. 196—213.

¹³ Նույն տեղում, էջ 196—213:

¹⁴ M. E. Stone. Holy Land Pilgrimage of Armenians before the Arab Conquest.—Revue Biblique, 93, 1986, p. 93—110.

արպեսզի նրանք իրենց պատարագը կատարեն իրենց լեզվով: Նա խորհուրդ տվեց նրանց հայերեն խոսել պատարագների, Ավետարանն ընթերցելու և մնացած ծեսերի ժամանակ, բայց միանալ հունարեն խոսող հայրերին սուրբ զոհաբերության արարողության ժամանակ և մասնակցել նրանց հետ սուրբ խորհրդին: Սակայն, երբ որոշ հայեր ցանկացան երեքսրբյան օրհնությանը միացնել «որ խաչեցար վասն մեր» հավելումը, որի հեղինակն էր Պետրոսը՝ Կնափեա (Խափիչ) մականունով, Աստծու այդ արդարացիորեն զայրանալով, հրամայեց նձանց երգել այդ հիմնը հունարեն...»¹⁵:

Սույն հատվածը հույակապ կերպով լուսաբանում է ինչպես հայերի հզոր ներկայությունը Պաղեստինի վանքերում, որտեղ նրանք իրենց սեփական մատուռներն ունեին, և իրենց աղոթքները կարգում էին հայերեն, այնպես էլ այն վեճերը, որոնք ծագում էին, դիցուք, VI դարի սկզբներին, միաբնակության վիճահարույց խնդրի շուրջ:

Նման պատկեր է ուրվագծվում նաև ավելի ուշ շրջանում՝ սբ. Թեոդոսիոսի Վարքի հաղորդած մանրամասներից¹⁶: Դրանց հիման վրա կարելի է եզրակացնել, որ VI դարի համար արտասովոր չէր այն իրավիճակը, երբ Պաղեստինի որևէ վանքում միասին ապրում էին հայեր ու հույներ, սակայն ժամանակի ընթացքում այն ավելի ու ավելի անհանդուրժելի էր դառնում¹⁷: Այնուամենայնիվ հայերը շարունակել են բնակվել այդ տարածքներում VI դարից մինչև մահմեդական նվաճումները:

Այս առիթով թերևս տեղին կլինի հիշել, որ հայերեն արձանագրության մեջ «Թուղունների խճանկարի» հայտնաբերման ժամանակ նույն վայրում պեղումները բացահայտեցին նաև մի շարք տապանաքարեր: Այդ տապանաքարերից մեկը ուներ հունարեն արձանագրություն: Սա վերոհիշյալ շինությունների համալիրի շրջակայքում հայերի ու հույների համակեցության մեկ այլ ապացույց է¹⁸: Վերջապես, այստեղ հավաքված տվյալներին պետք է ավելացնել 640-ական թթ. Նրուսադեմում քաղկեդոնական և հակաքաղկեդոնական հայերի միջև գոյություն ունեցող լավ հարաբերությունների մասին այն տեղեկությունները, որոնք կարելի է քաղել որոշ հայկական գրական հուշարձաններից¹⁹:

11. VI և VII դդ. Նվստաթի խճանկարի շրջակայքում՝ Դամասկոսյան դարպասից հյուսիս, հայերի ներկայության վերաբերյալ ոչ մի վստահելի մատենագրական վկայություն չկա: Ակնհայտ է, որ հայկական վանքերի՝ Անաստաս վարդապետին վերագրված ցանկն արժանահավատ չէ, ինչպես և ընդունված է համարել²⁰: Այնուամենայնիվ, այդ ցուցակում մենք կարողում ենք. «Սուրբ Պողոթոքտոսի վանքն, շինեալ Զորորդապետն հայոց ի

¹⁵ Vita S. Sabae. Գլ. 31 (Թարգմանում ենք ֆրանսերեն թարգմանությունից): St'ou A. J. Festugière. Les moines d'Orient: Les moines de Palestine. III (Paris, Editions du Cerf, 1962, p. 44).

¹⁶ Այլի հանգամանորեն տե՛ս M. E. Stone: An Armenian Pilgrim to the Holy Land in the Early Byzantine Period—JEA 19, 1934, p. 177—178. Նույնի Holy Land Pilgrimage before the Arab Conquest, p. 95—97, որտեղ աղբյուրներից մանրամասնվում են:

¹⁷ D. J. Chitty. The Desert a City. London, Oxford Mowbrays, 1966, p. 101—122.

¹⁸ P. M. Séjourné. Chronique paléstinienne.—Revue Biblique, 3, 1894, p. 627—628.

¹⁹ M. E. Stone. Holy Land Pilgrimage of Armenians before the Arab Conquest, p. 99—105.

²⁰ A. K. Sanjian. Anastas Vardapet's List of Armenian Monasteries in Seventh Century Jerusalem—Le Muséon, 82 (3—4), 1969, p. 276.

հիւսիսոյ կողմն»²¹։ Այս համառոտ տեղեկության հիման վրա տեսութիւններ են կառուցվել «թուշունների խճանկարը» պարունակող մատուռի ինչ լինելը բացատրելու նպատակով։

Հինթլյանն ասում է. «Դա 12-րդ լեգեոնի սպա սբ. Պոլիեկտոսի դամբարան-մատուռն է, III դարի այն ռազմիկ վկայի, որն իր բազմաթիվ զինվորների հետ հանգչում է խճազարդ հատակի տակ փորված գերեզմանում»²²։ Սակայն Անաստասի ցուցակում խոսվում է «Վանքի» և ոչ «դամբարան-մատուռի» մասին։ Փաստորեն, ինչպես տարիներ առաջ պարզաբանել է Դ. Հովսեփյանը, այս նույնացման կամ նրա հիման վրա հյուսված տարբեր պատմությունների համար չկա և ոչ մի հիմք. «նույնությունն ապացուցելու մասին խոսք լինել չի կարող։ Մենք չունենք և ոչ մի աղբյուր, ...թե այդ ավերակները սերում են Պոլիեկտոսի վանքից»²³։ Նոր գյուտը հնարավորություն է տալիս ենթադրելու, որ երկու խճանկարները մաս էին կազմում մի միասնական, ավելի բարդ վանական համալիրի, որի մեջ հայերը երկար ժամանակ աչքի ընկնող դեր էին խաղում։

Այս ենթադրությունն անշուշտ ամրապնդվում է Եվստաթի խճանկարի մոտակայքում հետազայում կատարված հայտնագործություններով, այն է՝ երկու տապանաքարերով և կավե գավաթի վրայի գրաֆիտով։ Բացի «Անաստաս վարդապետի ցուցակի» կասկածելի վկայությունից, տվյալ ժամանակաշրջանում և վայրում այդպիսի համալիրի գոյության մասին և ոչ մի ակնարկ չկա։ Այսպիսով, այս հնագիտական հայտնագործությունը ամբողջովին նոր պատմական տեղեկություններ է մատուցում Երուսաղեմում VII դարում քրիստոնյաների և հատկապես հայերի բնակության մասին։

ՏԱՊԱՆԱՔԱՐԵՐԸ

Բացի խճանկարի վրա եղած արձանագրությունից այդ վայրում գտնվել է նաև երկու տապանաքար, որոնցից մեկը լիովին պահպանված է, իսկ մյուսը՝ մասամբ կոտրված։ Այդ քարերը անսպասելի կերպով գտնվել են հունական եկեղեցու հատակից ոչ հեռու, այն վայրում, որտեղ կային գետնադամբարաններ։

Առաջին քարի ընդհանուր երկարությունը 87 սմ է, լայնությունը՝ 52,5 սմ, հաստությունը՝ 8 սմ։ Քարի վրա փորագրված է մի եղջերավոր խաչ, որի ներքևում երեքտողանի հայերեն արձանագրություն կա՝ խոշոր երկաթագիր տառերով (նկ. 2)։

ՊԵՏՐՈ
ՍԻՍՈՂԱ-
ՑԻՈՅ

Պետրոսի Սողացույ

Արձանագրության չափերը հետևյալն են.

տող 1. երկարությունը 37 սմ, լայնությունը 8 սմ, տող 2. երկարությունը 47 սմ, լայնությունը 8 սմ, տող 3. երկարությունը 28 սմ, լայնությունը 8 սմ։


Պետրոսը շատ տարածված, սովորական անուն է։ Անունը և մականունը՝

²¹ Նույն տեղում, էջ 276 (հայերեն բնագիրը բերում ենք ըստ՝ Դ. Ալիշան. Հայապատմ. Վեկետիկ, 1901, էջ 227)։

²² K. Hittinan. History of the Armenians in the Holy Land, Jerusalem, St. James, 1906, p. 15.

²³ G. Owssepian. Mosaik mit armenischer Inschrift im Norden Jerusalems, p. 90.

Սողացի, երկուսն էլ սեռական հոլովով են: Այսպիսով արձանագրության իմաստն է. «[Սա] Պետրոս Սողացու [գերեզմանն է]»: Սողքը Հայաստանի Սյունիք նահանգի մի գավառն է՝ Սևանա լճից ոչ հեռու: Դր. Յ. Յ. Ս. վայտենբերգը տեղեկացրել է ինձ, որ այսպիսի ուղղագրությունը կարևոր նշանակություն ունի հայկական լեզվաբանության որոշ խնդիրներ լուսաբանելու առումով (անձնական նամակ, 1992 թ., հունվ. 18):




Նկ. 2

Գրչության ձևը սովորական է այդ ժամանակաշրջանի համար, և հնագրության տվյալները ոչ մի հիմք չեն տալիս արձանագրությունը ճշգրիտ թվագրելու համար:

Այս տապանաքարը գտնվել է ուղղանկյուն գերեզմանի՝ երեք նմանօրինակ գերեզմաններից մեկի մեջ, որոնք հայտնաբերվել էին եկեղեցու գավթի արևելյան կողմում: Այն գտնվում էր գավթի երեք գերեզմանը ծածկող խճազարդ հատակի տակ, այնպես որ մենք կարող ենք եզրակացնել, որ գերեզմաններն ավելի հին են, քան հատակը: Այդ գերեզմանները պատող շաղախի մեջ V դարի դրամ կար:

Այս փաստերի լույսի ներքո մենք կարող ենք զգուշորեն թվագրել գերեզմանները VI դարի առաջին կեսով, և տապանաքարն էլ առնվազն այդպիսի հնության է:

Երկրորդ արձանագրությունը գտնվել է մի կոտրված տապանաքարի վրա, որը ամենալայն մասում 70 սմ է և ունի 45 սմ բարձրություն: Արձանագրության չափերն են՝ 30 սմ երկարություն և 14,5 սմ բարձրություն (Նկ. 3):



Եկ. 3

ԱՔԵԼ


Սա «Աքել» հատուկ անունն է: Հնարավոր չէ պարզել, արձանագրությունն ամբողջական է, թե ոչ: Եթե այն ամբողջական է, ապա ի տարբերություն Պետրոսի արձանագրության, անունն ուղղական հղումով է: Հնարավոր է, որ արձանագրությունն ամբողջական չէ, և սեռականի վերջավորությունը կտրված է: Մենք ձեռնպահ ենք մնում մեկնաբանություններից: Գրչության ձևը երկաթագրի հետաքրքրական տարատեսակ է, որը բնութագրվում է տառերի կլոր ձևով: Այն տպավորություն է ստեղծվում, կարծես դրանք դժվել են կարկինի օգնությամբ: Պետրոսի արձանագրությունը խորը չէր փորագրված, և տառերի եզրերը ջնջված էին, այնինչ Աքելի արձանագրությունը վարպետորեն է կատարված՝ խորը փորագրությամբ և սուր, հստակ եզրերով: Հնագրության տեսանկյունից պետք է նշել Բ և Ե տառերի կապգիրը: Այսպիսով, արձանագրությունն ունի միայն երեք հստակ առանձնահատկություն: Հայկական գրչության պատմության մեջ սա հնագույն հայտնի կապգրերից մեկն է: Որպես մյուս հին օրինակ կարելի է դիտել Սբ. Հովհաննիսի եկեղեցու 618 թ. արձանագրությունը: Գտնված ԲԵ կապգիրը հանդես չի գալիս Ա. Աբրահամյանի կապգրությունների ցուցակում²⁴: Երրորդ տառի վերևի աջ անկյունը կոտրված է, բայց հստակ ընթերցվում է:

Այս կոտրված տապանաքարը գտնվել է գլխավոր դամբարանի պեղումների ընթացքում՝ եկեղեցու արևմտյան մասում, որը հաճախ այցելվում էին ուխտագնացներն ու նվիրյալները: Անհնար է պարզել, արդյոք սա՞ էր տապանաքարի սկզբնական տեղը, քանի որ դամբարանը պարունակում էր այնպիսի առարկաներ, որոնք նրա մեջ էին ընկել եկեղեցու ավերումից հետո:

24 Ա. Աբրահամյան. Հայոց գիր և գրություն. Երևան, 1973, էջ 192:

ԿԱՎԵ ԱՆՈՔԻ ԳՐԱՅԻՏՈՆ

Այս գրաֆիտոն գտնվել է խորը կավե զավաթի արտաքին մակերեսի վրա, որն իր հերթին գտնվել է հյուրասենյակից հյուսիս տեղադրված բաղնիքի հանդերձարանի հատակին:



Նկ. 4

Գավաթի վրա նշմարվում է շորս նիշ: Դրանք անփութորեն փորագրված են անոթի թրծումից հետո: Ձախից աջ կարելի է կարդալ հայերեն շորս տառ՝ Գ տառը, գրված երկու անգամ տարբեր ձևով, և սրանց հաջորդող ևս երկու տառ՝ հայերեն «Ա» տառը և մասամբ պահպանված «Բ» տառը: «Բ» տառի ուղղահայաց գծիկը հատում է «Ա»-ի աջ կողմի զուգահեռ գծիկը (նկ. 4): Այդ տառերը ոչ մի բառ չեն կազմում, այլ վերցված են այբուբենի սկզբից (Ա, Բ, Գ)՝ «ԳԳԱԲ» հերթականությամբ: Սրան կարելի է տալ հետևյալ բացատրություն: Գրաֆիտոյի հեղինակը սկսել է գրել այբուբենը և գրել է «ԱԲ»: Այնուհետև նա գրել է «Գ»՝ «Ա»-ի մյուս կողմում (անհայտ պատճառներով), սակայն այդ «Գ»-ն անհաջող է ստացվել, որովհետև գործիքը սահել է և երկար ու անկանոն բիծ թողել: Այնպես, որ մի քիչ ավելի ձախ նա գրել է մեկ ուրիշ «Գ», որը ավելի հաջող է ստացվել: Այսպիսով, երեք տառերը միևնույն ուղղությունն ունեն, մինչ շորրորդի դիրքը տարբեր է: Որևէ հնագրական մեկնաբանություն հնարավոր չէ անել:

Խաղմ. Գ. Ս. ՄՈՒՐԱԴՅԱՆԻ
և Մ. Ս. ՇԻՐԻՆՅԱՆԻ

НОВОНАЙДЕННЫЕ АРМЯНСКИЕ НАДПИСИ ИЗ ИЕРУСАЛИМА

Проф. МАЙКЛ СТОУН (Еврейский университет Иерусалима)

Резюме

В конце 1991 г. к северу от Дамаскских ворот Иерусалима в районе Мус-рары во время раскопок были обнаружены четыре надписи на армянском языке: одна—на полу, две—на надгробиях и граффито на глиняном сосуде. Первая и самая пространный надпись находится в середине мозаичного пола в приемной жилой части монастырского комплекса: «Я, священнослужитель Евстат (Евстафий), положил эту мозаику. Входящие в этот дом, меня и брата моего Лукаса (Луку) помяните во Христе». Анализ этого посвящения, написанного на безукоризленном классическом армянском языке, показывает, что это—древнейшая армянская мозаичная надпись. На основе археологических данных она датируется VII веком, и, несмотря на некоторые различия в форме букв, ее можно сопоставить с древними надписями на камне, а также с надписью на «птичьей мозаике», обнаруженной в том же Иерусалиме во время раскопок 1894 года. К сожалению, судьба остального материала, найденного в этих местах и увезенного турецкими властями в Константинополь, неизвестна. Тем не менее настоящая археологическая находка свидетельствует о христианском, в частности, армянском поселении в Иерусалиме в VII веке, а также о существовании совместных армяно-греческих монастырей до мусульманского завоевания (ср. имена греческого происхождения Евстат и Лукас; братья, носящие их, были по всей вероятности, клириками). Надпись на одном из надгробий—«Петроса Содаци», на другом—«Абел». Оба надгробия, найденные под мозаичным полом, более древнего происхождения (в покрывающем их грунте найдена монета V века). надписи написаны еркатагиром (унциалом), первая из них—целая, вторая—немного повреждена, первая написана в родительном падеже, вторая—в именительном, форма букв у первой—несколько закругленная, у второй—нет, причем лигатуру букв *h* следует считать одной из древнейших наряду с лигатурой в надписи 618 г. из храма Рипсиме. И последняя небольшая надпись—на внешней стенке глубокой глиняной чаши, найденной на полу предбанника, расположенного к северу от гостиной. Эта надпись состоит из четырех букв—*ԳԶԱ*, являющихся начальными буквами армянского алфавита, и несколько измененной последовательности. Палеографические комментарии здесь невозможны.

THE NEW ARMENIAN INSCRIPTION FROM JERUSALEM

Prof. MICHAEL E. STONE (Hebrew University of Jerusalem)

Summary

In 1991 four Armenian inscriptions were discovered north of the Damascus Gate in the Musrara quarter of Jerusalem: one—on a mosaic floor, two—on the tombstones and a graffito on a pottery bowl. The first and the largest inscription was found in the middle of a mosaic floor in the reception room in the living quarter of the monastery complex. The analysis of this text written in impeccable Classical Armenian shows that it is the earliest Armenian mosaic inscription. On archaeological grounds it is dated within the later VII century, and despite some differences in

the form of the letters it can be compared with the most ancient stone inscriptions and with the „bird mosaic“ found in Jerusalem in 1891. Unfortunately the fate of the remaining material uncovered at this site and removed to Constantinople by the Turkish authorities is unknown. Nevertheless, the present archaeological discovery is a witness of a Christian, particularly Armenian settlement in VII century Jerusalem, and of the existence of common Greek-Armenian monasteries before the Muslim conquest (cf. the names of Greek oigir, Eustat' and Loukas; the brothers who bore them were probably clerics). One of the epigraphs is „of Petros of Soak“ and the other—„Abel“. Both tombs found under the mosaic floor are of an earlier origin (the fill covering them contained a V century coin). The inscriptions are written with uncial script: the second is on a broken tombstone; the first is written in the genitive, the second is in the nominative; the first has a round form of letters; the ligature *Ϡ* must be considered as one of the earliest, like the one in the inscription of the Hripsime church written in 618. And the last inscription is a graffito on the outer surface of a deep pottery bowl which was found on the floor of the dressing room in the baths which are north of the guest room. It consists of four letters—*ϠϠϠϠ* which form the beginning of the alphabet in a changed order. No paleographic remarks are possible here.